

զանոնք ըստ կարողութեան¹: Այսպէս կը պատմէ Դաւրիթեցի, թէ Սարգիս հայրն Անապատին յանձնեց զՓիլիպպոս պատանին «յաշակերտութիւն Մովսէս վարդապետին. առ որ կացեալ Փիլիպպոս եհաս յարբունս հասակի. ի տիս երիտասարդութեան օրհնեցին զնա կուսակրօն քահանայ. եւ նա ի տուէ եւ ի զիշերի հետեւէր ճգնողական վարուց եւ զործոց առաքինութեան եւ յընթերցումն եւ յուսումն աստուածային գրոց: Զորոյ յառաջադիմութիւնն տեսանելով վարդապետին Մովսէսի՝ իւրով հաւանութեամբ եւ վկայութեամբ ամենայն եղբարց ետ նմա զիշխանութիւն վարդապետական եւ յետ ամաց ինչ զգաւազան վարդապետական» եւ 1630ին ձեռնադրեց եպիսկոպոս: Խօսքը Փիլիպպոս կաթողիկոսի մասին է (Դաւր. 315):

Այսպէս նաեւ Ներսէս Վ. Մոկացի, Բեզլու կոչուած, Մոկաց Ասկնջաւս գիւղէն, որ Ամիրզոյլու վանքն առ ոտս Բարսեղ վարդապետի ուսած իմաստասիրութիւնը «յարտաքին գրոց» եւ ընդունած վարդապետական դաւազանը՝ հրաժարած էր աշխարհէ առաթուր կոխելով «զամենայն ունայնութիւն կենցաղոյս . . . եւ դպատրանս մեծութեան» եւ յա-

¹ Պօղոս վարդապետի մասին կը գրէ Ներսէս Մոկացի (Հայագատում, § 398).

Վարժող էր նա անձանձիր,
 Թէ լինէր ոք փափագ ուսման.
 Թէ չէ ինքն ինքեան ասէր,
 եւ երզէր զերգս զաստուածական: